ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար գրասենյակային և կենցաղային կահույքի ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ՇՀԱՊՁԲ-15-13-16/14» ծածկագրով շրջանակային համաձայնագրի շրջանակում գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 23 նոյեմբերի 2016թ.

Սույն թվականի նոյեմբերի 23-ին ժամը 14.30-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար գրասենյակային և կենցաղային կահույք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ՇՀԱՊՁԲ-15-13-16/14» ծածկագրով շրջանակային համաձայնագրի շրջանակում գնային առաջարկների բացման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Ն. Ա. Կուտուզյանը, հաձնաժողովի անդամներ՝ Խ. Ժ. Սաֆարյանը, Տ. Հ. Զաքոյանը և Ս. Պ. Կարապետյանը: Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց գրանցամատյանի գրառումների մասին, ըստ որի հայտեր պարունակող ծրար են ներկայացել «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ն, (հասցե՝ ք. Երևան, Հ. Քոչար 8-16), «Մ.ԱՇԽ» ՍՊԸ-ն, (հասցե՝ ք. Գավառ, Արծվաքար թաղամաս) և «ՍԵԳ» ՍՊԸ-ն, (հասցե՝ ք. Երևան, Սարկավագի 72/2, բն.18):

Հայտեր պարունակող ծրարներ չեն ներկայացրել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/13 շրջանակային համաձայնագիր կնքած և հրավերն ստացած թվով 348 կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր:

Հանձնաժողովը գնահատեց.

1) **«ՍԵՆԴԱ» ՍՊԸ**-ի հայտ պարունակող ծրարը մասնակցի կողմից կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝
   - շրջանակային համաձայանագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում,
   - հայտարարություն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին,
   - հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին,
   - հայտարարություն՝ ֆինանսական միջոցների մասին,
   - հայտարարություն՝ տեխնիկական միջոցներ մասին,
   - հայտարարություն՝ աշխատանքային ռեսուրսների մասին:
   - գնի առաջարկ՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար,
   - հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,

Ծրարում առկա էր մեկ բնօրինակ, երկու պատճեն, յուրաքանչյուրը՝ ութ էջից:

2) **«Մ.ԱՇԽ» ՍՊԸ**-ի հայտ պարունակող ծրարը մասնակցի կողմից կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝
   - շրջանակային համաձայանագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում,
   - հայտարարություն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին,
   - հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին,